տեղ բռնել էր հայ ազգաբնակութիւնը։ Գիւղերը վերաշինւում էին։ Մշակւած արտերը ծածկւում էին կանաչով։ Աշխատանքը եռում էր։ Մի ձեռքը հրացան, միւսում մաճ ու բահ՝ հայ գիւղացին ողողում էր քրտինքով հայրենի հողը և անօրինակ ոգեւորութեամբ ու եռանդով վերաշինում այն, որ քանդել էր բարբարոս թշնամին կամ պատերազմի դաժան չաստւածը։

Բացի կառավարական հիմնարկութիւններից, գրաււած վայրերում աշխատում էին և բարեգործական ու մշակութային մարմիններ՝ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը, Եղբայրական Օգնութեան Կոմիտէն, Քաղաքների Միութիւնը, Գաղթ. Կենտր. Կոմիտէն, Մոսկւայի Կոմիտէն, զանազան հայրենակցական ընկերութիւններ, որոնց ներկայացուցիչներն ու գործակալները գրաււած էին զանազան վայրերում։ Բազմաթիւ գործիչներ հետզհետէ անցան գրաււած վայրերը՝ լծւելով աշխատանքի՝ պետական ու հասարակական ասպարէզներում։ Նրանց մէջ էին Խաչ.Կարճիկեանը, Ռ.Տէր Մինասեանը, բժ. Ա. Պողոսեանը, Կ. Համբարձումեանը, Վ. Քրմոյեանը, Կ. Սասունին, Տ. Զօրեանը, Սասունցի Մանուկը, Սասունցի Մուշեղը, Մ. Դարմանեանը, Մ. Տէր Գրիգորեանը, Բ. Աբոյեանը, Տ. Աղամալեանը, Հ. Մակարեանը և շատ ուրիշներ՝ բժիշկներ, գիւղատնտեսներ, դեղագործներ, դթութեան քոյրեր, որբահաւաքներ ու որբ խնամողներ, վարչական պաշտօնեաներ, մարտիկներ։

1918 թւի ամառը Վան—Մուշ—Բասէն տարածութիւնը բնակեցւած էր հայ ազգաբնակութեամբ, հարկաւ, ոչ խիտ գիւղերով, և հայկական վիլայէթները դարձել էին իսկական մաքով Հայաստան։ Մօտաւոր հաշւով, գրաււած վայրերի բնակչութիւնը դասաւորւած էր հետեւեալ ձեւով. Բայազէտ և շրջակայքը՝ 10,000 մարդ, Դիատին՝ 5,000, Ալաշկերտ՝ 30,000, Բասէն՝ 22,000, Խնուս՝ 28,000, Կարին և դաշտը՝ 6,000, Դերջան՝ 4,000, Երզնկա՝ 3,000, Ճորոխի հովիտը՝ 3,000, Բուլանըխ-Մանազկերտ՝ 4,500, Տրապիզոն՝ 1,500, Վանի նահանգ՝ 25,425 — ընդամենը՝ 142,425 մարդ*)։ Տեղական վարչութիւնը կրում էր գրեթէ զուտ հայկական կերպարանք. տեղ-տեղ գոյութիւն ունեցող ռուս պաշտօնէութիւնը ձեւական դիրք ունէր և շատ քիչ էր ազդում գործերի վրա։ Բացի վարչութիւնից, կային ինքնապաշտպանութեան խմբեր, որոնք պահակի դեր էին կատարում։ Ժողովուրդն ինքն էլ զինւած էր և ի վիճակի պաշտպանելու իրեն։ Բացի այդ, Վանում, Մուշի շրջանում, Խնուսում, Ալաշկերտում, Էրզրումի և Երզնկայի կողմերը գործում էին զուտ հայկական զօրամասեր։ Որոշ վայրերում հիմնւած էին որբանոցներ, որոնց մէջ հաւաքւում ու խնամւում էին որբերը։ Կարևոր կէտերում կային սննդակայաններ, հիւանդանոցներ, բուժարաններ։ Մի խօսքով, Թիւրքահայաստանը յարութիւն էր առնում մոխիրների տակից, եռանդով վերաշինւում ու պատրաստւում էր նոր կեանքով ապրելու համար**)։

---

*) Տես՝ «Հորիզոն», 1917թ. յունւ. 1.

**) Թիւրքահայ գրաււած հողերի մասին տեղեկութիւններ կարելի է ստանալ Կ.